



49. ՆՍՈՒՇ

Ժամանակով երկու մարթ կիլնին ախպերագիր, կերթան Ստանապոլ: Երկու-իրիք տարը կը մընա, մեկն կիլնը սիլաջը, փարա կը վանսորկը, կը գա տուն: Տալ խարիր կուրուշ կա ան մեկին ան, ինչ գո Ստանապոլ: Ատ մեկն էլ խըլխուն կը տեսնա սընտուկըմ կը ծախին, ատ ծախող կը կանչը, կըսը. «Առնող փոշման, չառնող փոշման»:

Ատ սաբաթ կը գընը, կը բիրը, կը դընը ուր հողեն, ատու ընկեր կըսը. - Դու իմ ընկերն իս, քու մեր տը գա խանգընը, իս ի՞նչ քըհապ տամ:

Լաճն էլ կըսը. - Ա՛ռ նա սաբաթ, տա՛ր իմ մեր, թըխ ջըլիր դընը վերա, չուր իս գա՛մ:

Կառնը կը տանը, ատա սաբաթն էլ կուծ ը, մարթ չըգըտը ինչ կա հինը: Կը տանը ատ սաբաթ, թասլիմ կանը, կըսը. «Նաիրիկ առ, չուր տարի՛մ երկու էլ քու լաճ կը գա՛»:

Սընտուկ կը դընին պառվու տուն, էրկօր, իրիք օր վերա կընցը, ատա սաբաթ ներսից կը կուծվը, կը պացվը: Պառավ հըմեն օր տընեն կերթա տուս, ատ ախչիկ կիլնը, տուն կա՛վը, կը սաբսըփը, էլմէլ կը մըտնը հինը:

Պառավ ամեն օր կը գա, կը տեսնա տախտ ավլուկ, պուտ-կըտիր լվացուկ, կը անջեպնա:

Բըռըմ օր վերա կընցը, պաղ կը դընը, կը տեսնա սընտըկից ձենըմ կիլնը՝ ճը՛նկ, ճը՛նկ, ճը՛նկ, տուս կը պացվը, ախչիկըմ կիլնը, տախտ կա՛վը, պուտկըտիր կը լվա, տ՛երթա ուր տը մըտնը սընտուկ, պառավ կը վագը, կը պըռնը, կըսը. - Վա՛ր, իմ լաճ քի գընը, հորողկը, տուս քի վա՛ր ծի պախե՛ս:

Ախչիկն էլ կըսը. - Մարթու մ'ըսը, մ'ի'ցկը տաւս, նա տաւս-տեղ ծի'րն ր:

Պառաւն էլ կըսը. - Խա', մի'րն ր:

Ախչիկն էլ կըսը. - Օր անցկուն ր, կընա', ուսթե'մ կա'նչը գա', քաժա անուշ տուն տու շինել:

Պառաւն էլ անցկուն կը կանչը ուսթեն, կը պիրը, տուն կը տա կանին իրիք կաթ: Ախչիկն կը տընը վըրըն կաթ:

Ախչիկն էլ պառվուն կըսը. - Չիլնիմ, չիմանամ մարթ թըղնիս գա չուր մըջըն կաթն էլ, թուղթ էլ հորո'ղկը քու լաճուն, սա՞ թըխ շուտ իլնը, գա:

Թուղթ կը խասնը պառվո լաճուն, լաճ կիլնը, կը գա:

Աընտուկ բերող մարթ կըսը. «Նա պա'մ կեր անտ սաբաթը մեջ, որ պառաւ ընցնա տու'մ շինեց»:

Շատ խարց-փորց կանը լա թու բա'մ չիմանա: Օրըմ հառեջից կիրիշկը, կը տեսնա, որ փանջարով ներս ախչիկըմ կա, ինչըխ կանը, չըն թըղնը, որ ան իլնը վըրըն կաթ: Ան էլ ուր միտ վե կըսը. «Իս տ'երթամ ճամբախ, իմ ինկիրոջ սիմ, որ ան ախչիկն սպանը, ան անուսպը ր, ընցկընա ր, ընցկընա ր»:

Էլաւ, գընաց ինկիրոջ հիրճիվ, էսաց. - Ան ինչ անաբարզ ախչիկ էր, դիրի սաբաթ վե, հորողկիցիր, մըկա սարե'մ շիներ ր, հոր տաս մարթ կը բիրը ուր մոտ, հոր տաս մարթ կը խանը: Իմ իրիս գետին վե կերթա, ալ իս չըմ կանա թու մարթու իրիս իրիշկը, իսն էլ թըղիր իմ, գեղից իլիր իմ տաւս:

Ան մարթն էլ կըսը. - Ահտ իլնը, իս խատ խասնիմ տուն, խանջարըմ գանիմ մա անու սըրտին, գան ըսպանիմ:

Պառվո լաճ կը գա տուն, մեր կուրախանա, ընթրիս կուտին, կը տանին վըրըն կաթ մա անու կընիկ, ինք կը տանա տուն, կը քընը:

Ատ մարթն էլ ձեն չըխանը, չուր ուր կընիկ ուր խալաւքիր կը խանը, ճըրագ փըշու'մ կը մըժղավացըցը, կը գա, մըտնը ուր տեղ, խատ իրկան կըշտին: Իրիկն էլ բարցը տակեն բըջախըմ կը խանը, մեկ կը գանը կընկան ծըծերու տակ, կը պըռնը հառեջվե, կը թալը պատը տակ:

Պառնանք վար ախչկան:

Ախչկան մատ ալմաստ մատնիկըմ կեր, որ էրեգանկան նըման կը բըրըղկըտեր: Բազըրկա'մ իրը անտ գեղը տակ, քարվան

էթալ, տեսա՛վ բա՛մ կը բըրըղկըտա, ականջ կանը՝ խիծուցըմ կը գա: Ատ էլ մարթ կը հորողկը, ուր կը գա՛ կը տեսնա՝ ախչիկըմ ընկիր ը հատե, մատնիկըմ գի մատ կը պըսպըղա: Ան էլ կը տառնա, բազըրկանպաշուն կըսը. «Պրինտա՛ր ախչիկըմ ընկիր հանտե՛ ալմաստե մատնիկ գի մատ, ուր անկուն լիս կը տա»:

Բազըրկան էլավ, ծի՛մ խեծավ, ծի՛մ էլ տարտակ ուր խիտ տարավ, ախչիկ խեծուց, իպը: Մում վառեց, իրիշկից, տեսավ ախչիկ ծեռքիր դրիր վա՛ր ուր պըրնին: Տեսավ ախչկան սուրաթ, մայիլ էլավ, էսաց. «Կուտըր ան ծեռ, ուր տարթ գա՛րկիր նատե: Ահտ իլնը, իս նա քառսուն պեռ մալ խա՛րջիմ, չուր նա պըրին տամ ժըրըցըցիլ»:

Ուր քարվան կը պաննա, կը յա մա բիրընջի հեքիմըմ, կըսը. - Դեքի՛մ, իմ կընկան պըրին ժըրըցըցիս, նա քառսուն պեռ մալ, ինչ որ ուզիս էլ, տամ:

Ատ բազըրկան, ան հեքիմ ինչըխ կանին՝ չըն կանա անու ծուց բանա, որ տեղ անին, անկուն անաթով էր, անկուն ամչկուր էր: Դեքիմ ինչըխ կանը՝ խալավ չըխանը, ան էլ մըկրատով ան պըրնը դեմ խալավ կը կըտըր, նուր ըզպըրին կը տեսնա:

Բազըրկանին կըսը. - Գընա՛, քառսուն օր էլ ա՛րը:

Դեռսուն օր տը ժըրըզցեր, տաս օր էլ ուր մոտ տը պախեր, քեֆ աներ խիտ չուր ան գեր:

Բազըրկան բանցուց ուր ջորիք, էլավ, գընաց:

Դեքիմն էլ քըսան օր տեղ արավ, ախչկան պըրին աղեկցավ, տաս օր էլ տեղ արավ, պըրին խորոտ ժըրավ:

Դեքիմ էլ ան մեկ օր ծեռ կը թալը անու վըզը բուլբուր, ըզան կը պագը, ան էլ կըսը. - Աստըվա՛ծ կը սիրիս, տալ ծեռ մի տա ըզի, չուր սերտ խորոտ ժըրը, չըխտ իս քուն իմ, չուր տաս օր էլ չուր իմ իրիկ կը գա:

Դեքըմու կեմ կը բիրը, չուր հիրիկուն հեքիմ կը քընը, ան էլ կիլնը, տոռ կը շինը վա՛ր հեքըմոչ, անու խորոտ ծի՛մ էլ կա, կը խեծը, յալա բաբամ, կը քըշը: Կը քըշը, չուր արև կը տեսնա, կը տեսնա քառսուն խատ խա՛րանիկ, գող, կը գան ուր չորսբուլբուր կը բըռնին: Ախչիկն էլ անկուն խորոտ էր, վա՛ր ուր կը պաշլալին կըռվիլ, ախչիկն էլ կըսը. «Վըրե՞ կը կռվեք, իս մեկ իմ, դուք քառսուն եք, իս բընենաէ տը խասնիմ մեկը: Մա ծի վով շուտ նա թաս տանը նոհան հախպիւր, թասըմ ջուր բիրը ծի, իս անուրն իմ»:

Ըզթաս կը թալը, մեկն կառնը, կը փախը, մեկէլքիր կը վագեն հիտիվ չուր վար հախպըրին: Հախպըրը վերա մեկ կը լըցը, մեկէլն կը թափը: Ախչիկն էլ ուր ծին կը քըշը, կերթա:

Ինչ կիւնը մըթընշեղ, կը խասնը քաղաքըմ՝ պառվու՛մ տոռ, պառվու՛ն կըսը. - Աստըծու սիրուն, ծի արա՛ քի լաճ, երկու-իրիք օր ծի դավանում տու, մըհա ինչըխ կիւնը:

Ինք օր խասեր էր քաղաք, ուր խանար մարդանակ խանա-վըմ առեր էր, խագեր էր: Մեկ քանը օր ատ քաղաք կը մընա, չուր օրին մեկ ատ քաղքը թագավոր կը վերջանա: Դուվաթը խավք կը թըղնին, կը գա, կը թառը վար ատ ախչկան գըլխուն:

Կըսին. - Ան վո՞վն ը:

Կըսին. - Պառվի լաճն ը:

Կըսին. - Պառվը սոյեն թագավոր չիւնը:

Ատ ախչիկ կը տանին, կանին մուք տու՛մ հինը, էլըմ ըզ-խավք կը թըղնին, խավք էլըմ կան կը գա հաւորաւս վե, կը յա, կը թառը վար անու գըլխուն:

Կը բիրին, հաւորաւս կը կալնին, էլըմ կը թըղնին, էլմէլ կը գա, կը կայնը տանիս, այնե վար անու գըլխուն, կը բիրին, տանիս կը փուրին, կը տեսնան, որ այնե վար անու գըլխուն կայնիր ը:

Կըսին. - Ջա՛նըմ, կիւնը մա Աստըծուց ը, բերեք անինք թա-գավոր:

Կը բիրին, ըզան կանին թագավոր, կը նըստըսցին վար թախտին:

Ախչիկն էլ կը բիրը խեր-խըրաթ կանը, կարգ-կանուն կիցկը ատ երկրը մեջ, անցկուն կանը, ուր գառ, գել խատ մեմեկու կերե-ծան: Ացկուն անուշցեր էր ատ երկիր:

Տորսեն ատ թագավորն էլ ուր սուրաթ կը քեշը, գանիլ կը տա վար հախպըրը պատին, երկու մարթ կը դընը ատե նոբաթ, կըսը. «Վով ինչ կը գա, կիրիշկը թախ ատ պատկիր, ախ կանը, գան բըռնեցե՛ք, բերե՛ք մա ծի»: Գընա ուր խարանիկտիր, ուր իրիկ, բագըրկան, հըմեն տը գան ուր հիտիվ, անու խանար ուր պատկիր քեշից, կախից ատե, օր կաներ գանոնք հըմեն բըռներ:

Երկօր մընաց, քառսուն խարանկըտիր իկին վար հախպը-րին, իրիշկիցին, ըզսուրաթ տեսան, ախ արին: Բըռնեցին, պիրին, քացին մա թագավոր, սիցին՝ քառսուն մարթ իկին իրիշկիցին թախ պատկիր, ախ արին:

Թագաւորն էլ գըցավ, ուր քառսուն գողիրն ին, էսաց. - Տարե՛ք, գանոնք հըմեն էլ բըռնեցե՛ք:

Երկօր էլ մընաց, հեքըմ իրը վար հախալըրին, լըվացվավ, պատկիր տեսավ, ախ արավ, գան էլ տարան թագաւորը մոտ:

Թագաւոր էմէլ էսաց. - Նա էլ տարե՛ք, բըռնեցե՛ք, լա մա չոկ տեղըմ իլնը, ան քառսուն մարթու մոտ մ'անեք ըզնա մարթ:

Ձան էլ տարան չոկ տեղ բըռնեցին:

Երկու-իրիք օր էլ մընաց, ուրիշ մարթըմ իրը, ան էլ ախ արավ, գան էլ տարան մա թագաւոր, թագաւոր ճանչըցավ, օր բազըրկան էր, հրաման իտու, որ ան էլ տանին, հափս անին:

Ժամանակըմ էլ վերեն ընցավ, մեկ ուրիշ մարթըմ էլ իրը վար հախալըրին, ան էլ մեկէքիրու թարգ լըվացվավ, լըվացվիլու գախ աչք կիյնը պատկիր, ախ կանը, կը բըռնին, կը տանին մա թագաւոր:

Թագաւոր էսաց. - Ձատ մարթ տարե՛ք թաց տեղըմ, օրե մեկ խա՛ց տըվեք անու թային, չուր իս վերա կը խարցընին:

Երկօր էլ վերա կընցնը, խեղճ մարթըմ էլ կը գա, էն էլ կիրիշ-կը սուրաթ, ախ կանը, գան էլ կը բըռնին, կը տանին, ըզան էլ ուրիշ տեղըմ հափս կանին:

Սուռցա սեր, ուր ըզբազըրկան, հեքըմ խագար կը բըռնը լա անանց խորոտ լըխեֆ-տիշակ, օրե իրիք տան չայ կը տա, չուր վար անանց կը խարցընը:

Տորսեն ատ մարթիր կը խըլըսնին, ան գըտեր, որ գըմեն տը գեն անու հիտիվ, կան գյեն, անու խամար էլ ան անկուն արավ:

Ձըմեն ընչ թումուման, էսաց. - Դիվանխանը մեջ համեն մեկին ջոկ փարտա կապեցե՛ք, ուր անոնց շարիաթ կըտրին, մըհա վըրե՞ անանք ախ արին:

Խատ մեմեկը կըշտին համեն մեկին տեղըմ իտը:

Դըրճըն տիր կանչից քառսուն խարամիկտիր, անոնց էսաց. - Դե՛յ, մարթիր, տաւ վըրե՞ ախ արիք: Ըշտա՛կ սեցեք, թե չէ՝ մեկտ էլ չըք անգատվը: Վո՛վ ըշտակ սը, բալըքըմ անգատվը, վո՛վ սուե՛ սը, անու վիզ տը գանին:

Խարամիկտիրն էլ կըսեն. - Թագաւոր՝ ապրած կենաս, հալ-քեֆաթ մա յը: Մենք քառսուն խարամիկ ենք, տեսանք ախչիկըմ իրը, սիվ ծիու՛մ վերա խեծուկ էր, մենք չուրս կընարեն ըզան բռնիցինք: Ան էսաց. «Վո՛վ մա թաս շուտ տանը, նոհան հախալուր

ջուրըմ բիրը ծի, իս գան տ'առնիմ»: Մենք էլ քացիք վար հախ-
պարհին, մեկ իլից, մեկ թափից, մեկ իլից, մեկ թափից, չուր
ակախսանք՝ ախչիկ չըկա, մենք էլ իկիք ըստա, անու պատկիր
տեսանք, ախ արիք:

Թագավոր կըսը. - Դե՛, էլե՛ք, ծի տեղ նստե՛ք:

Ձանոնք կը հորոդկը ուրինց հողեն: Խարանիկտիրու
պատմութիւն մեկէլքիր հըմեն կը լսին:

Դոր կը կանչը, հուրիշ մարթըմ կը բիրը, կըսը. - Դե՛յ, մա՛րթ,
տաւ ինչ անպով ախ արիր, քի՛ ի՞նչ իլիր:

Ատա մարթ կըսը. - Ինչ իլիր, չըխո ծի իլիր, ան ծին ինչ
մըկա կըսին խարանիկտիր, ան իմ ծին էր, իսն էլ հեքիմ էր,
քառսուն ուսըկու տեղ տըվը, նուր ըզան ժըրըզցը, իսան էր, իմ
սերտ վար անու անրանվ, ծեռ բիրը վըզը բաւիւր, պագըմ տ'առ-
ներ, իտու Աստըծու սեր, էսաց՝ ծի մը՝ մոտխըսնա, չուր իմ պըրին
ժըրը, իս չըխոմ քուն իմ, չուր իմ իրիկ գա: Ըգի խապից, գիշիր իմ
ծին առեր, փախեր:

Թագավորն էլ էսաց. - Անցկու՛մ օր տաւ ըզան տեղիր ես,
երկու տան տաւ ըզան կը տեղեր, իսան ը, բան ը, սերտ կը մեղա-
վորներ, տաւ ըզան ախչիկ թուչար չը՞ս պագնիր, գիշիր մա ան
չը՞ս քընիր:

Ան էլ կըսը. - Զէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, անցկու՛մ անտանցը ախչիկ մ'եր,
որ արը, չարը՝ անտ պըրին չէ բաց, չուր մըկրատով պըրնը դեմ
կըտիր իմ, պըրին բացիր իմ, տեղիր իմ:

Թագավոր կըսը. - Որ անցկու՛մ ը, ի՛լը, քու տեղ նըստը՛:

Ատ մեկէլ մարթ կը պիրը, խարոց-փորոց կանը, կըսը. - Դե՛յ,
մա՛րթ, տաւ վըրե՞ ախ արիր:

Ան էլ կըսը. - Ա՛խ, ան հեքիմ ինչ կըսը, ան իմ կընիկն էր:

Թագավորն էլ կըսը. - Ուր ան քու կընիկն էր, տաւ ի՞նչըխ
պըրինտար արիր:

Ան էլ կըսը. - Իմ կընիկ չէր, համա օրըմ իս իկը քաղաքըմ,
կուշտ գարկեր են, թաւեր են տակ փանջարեն վե, իսն էլ անտ
կընիկ առը, բիրը անտ պըրինտար հաւով, տարա մա հեքիմ, սիցը՝
իմ քառսուն պեռ ապրանք տը փըճըզցիմ, չուր գան ժըրըզցիմ,
անիմ ծի կընիկ: Դեքըմու խիտ բարըշա օր մեկ ուըսկը, ուր իմ կը-
նիկ քառսուն օրվա մեջ ժըրըզցեր: Քառսուն օր որ ընցավ, էլա,
քացը, կը տեսնամ մընչ կընիկ կա, մընչ հեքիմ: Տորսեն իս էլ իմ

քառասուն պեռ հըմեն կերա, հըմեն թալաֆ արը, փուճ արը, ընկիր իմ, ուր հիտիվ կան կը գամ, մըկա իկը, ուր պատկիր տեսա, ախ արը:

Թագաձորն էլ էսաց. - Ատ ընցնեմ ժամանակ տու ըզան կան ըծցիր, տու անու մոտեն պագըմ չառի՞ր, անու լեշն էլ չըտեսա՞ր:

Բազըրկան էլ էսաց. - Չէ՛, թոպա, հիրճիվ Աստղծո, իս անու չըմ մոտխըսցիր, գան չըմ պագնիր, անցկում պըրիմտար էր, վո՞վ զըխշներ էրեշկեր հինը:

Թագաձոր կըսը. - Դե՛, հեքի՛մ, ուր անցկուն ը, տու՛ էլ իլը քու տեղ:

Կը կանչը, ան մեկէլ մըզավոր կը բիրը, կըսը. - Դե՛, ա՛րը, ըշտա՛կ սա, մըհա տու վըրե՞ ախ արիր:

Ան էլ ուր միտ վե կըսը. «Ախըր ի՞նչըխ անիմ, ըշտակ սիմ, բալքըմ անգամվիմ, սուք սիմ, իմ բան պոշ ը»:

Ախր ան էլ կըսը. - Թագաձոր՝ ապրած կենաս, մա հըմեն մըզավորութիմ իմ մոտեն իլիր ը, իս արը: Իս ինչըխ արը, չըկանցա ըզան բըռներ յար, իս էլ գացը, մա անու իրիկ բեքախտութիմ արը, ան էլ ըզատ ախշիկ պըրիմտար արավ, փանջարից էթալ տակ:

Թագաձորն էլ կըսը. - Ապա տու վըրե՞ անու հիտիվ կան կը գան:

- Հե՛յ, թագաձոր՝ ապրած կենաս, - էսաց մըզավոր մարթ, - մըկա էլ իմ սերտ անցկում մընացիրը խա անու, որ կան կը գամ, բալք անու սերտ տառնա, ծիկ առնը:

Թագաձորն էլ էսաց. - Տըղա՛, տու գան Ստանպուլա բիրիր, տու սընտուկը տոռ չըբացի՞ր, խա անու խաբար չըտվի՞ր, յան անու մոտեն պագըմ չառի՞ր:

Ան էլ էսաց. - Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, թոպա, իս ակախ չունիմ անու մոտեն, իս չըր կըտնա չըխտ մըհա ինչ կեր սընտկը մեք, չուր բիրը տուն: Ժամանակըմ էլ վերեն ընցավ, մուր օրըմ, ուր անունց տուն ախշիկըմ կա, ինչըխ արը, չըկանցա անու սերտ դարձներ թախ ծի, իս էլ իմ կըսկըծուն անցկուն արը:

Թագաձոր էսաց. - Դե՛հ, ուր անցկուն ը, ի՛լը, մը՛ստը քու տեղ:

Ատ մեկէլ մարթ կը կանչը, կը բիրը, ատ չիվար մարթուն կըսը. - Հե՛յ, մարթ, ինչ անով իկիր, ատ սուրաթ տեսար, ախ արիր, ըշտա՛կ սա, ուր ըշտակ չըսիս, ըզքի տը տամ ըսպանիլ:

Մարթն էլ էսաց. - Թագա՛վոր ապրած կենաս, ատ կընիկ, ուր կըսին զըմեն, ան իմ կընիկն ը, ատ մըզավոր մարթ, ուր փըշու՛մ առաջ էսաց, ան ծի խապից, իս էլ իմ նամուսը խաթըը խամար անցկուն արը:

Ան էլ կըսը. - Աղե՛կ, տաւ չըխարցընե՞ր քու մոր, քու տըրկը-ցին՝ մըհա աղո՞ւրթ էր, տո՞ւթ էր:

Կըսը. - Զէ՛, իս էլ քահել մարթ էի, բարկացեր էր, խապվա, իմ կըսկըծուն անցկուն արը:

Ան մարթն էլ իմացավ, թը քանի՛մ փուրծանք իկիրը ուր կընկան գըլոխ, խասկըցավ՝ տալ ուր կընիկ անարատ ը:

Տորսեն թագա՛վոր կանչեց ատ քառսուն խանրամիկտիրուն, էսաց. - Դե՛յ, մարթի՛ր, ալ խանրամություն մ'ա՛նեք, քացե՛ք վար-ցա՛նք արեք, ծի խամար ապրեցե՛ք:

Խանրամիկտիրն էլ թոպա կանին, թագա՛վորն էլ անոնց պաշխիշ կը տա, կը ճամխը:

Կը կանչը, ատ մեկէլ հեքիմ կը բիրը, կըսը. - Դե՛յ, հեքիմ-բա՛շը, քանի՞մ քի տեղ-տեղրանքի գին գանցիր ը:

Դեքիմ կըսը. - Ռաստ սիլ քսան օր տեղիր իմ, քսան ուըսկը ծի ծախս իլիր ը, իմ ծին էլ փախցըցը, տարիր ը:

Թագա՛վորն էլ էսաց. - Ա՛ռ քի հերսուն ուըսկը, թըղ տաս էլ քի հավիլ իլնը, ա՛ռ քի ծի՛մ էլ, տաւ քաւ մարթ իս, քի դա՛վը խա ատ բանիրուն չըկա:

Ըզան էլ ճամխու կը դընը:

Կը կանչը, բազըրկան կը բիրը, անու քառսուն պեռ ապ-րանք կը տա, տաս էլ հա՛վը կը տա, քանիմ ծախս իլիր, անու կը տա, ըզան էլ ճամխու կը դընը:

Կանչեց ըզան մըզավոր մարթուն, էսաց. - Տաւ իլիր իս հըմե-նանց դարտ-ցավը պատճառ, տաւ ուզիր իս զան ախչիկ կորսըս-ցիլ, լա Աստըված ըզան չըկորսընցըցիր:

Ղաստուր իտու ջալատքիրուն, ուր անու վիզ զարկեն, ըզան կը տա ըսպանիլ:

Մընաց ան խեղճ մարթ՝ ուր իրիկ, էսաց. - Տաւ կա՛յնը, քու պատասխանն էլ հիրիկուն կը տամ:

Էվարին կանչեց ատ մարթ՝ մընակ տարավ մա ինք, էսաց. - Դե՛յ, մա՛րթ, տաւ գըտի՞ս՝ իս վովն իմ:

Ան էլ կըսը. - Չէ՛, իս ինչ գըտիմ տաւ վո՞ւմ իս, իս քի դո՞ւր իմ տիսիր:

Ան էլ էսաց. - Չա՛յ, Աստըված քաւ տուն չավորը, չէ՞ իս քու կընիկն իմ, իս ան սաքաթը մեջն էր, ուրը տաւ Ստանպոլա գընիցիր, հորողկիցիր տուն: Տաւ լսար՝ ինչ փութանք իկիր իմ գըլոխ, լա՛ իս Աստըծով ագաւովիր իմ պե թըվաղկ: Դե ի՛լը, գընա՛, թա՛միգըմ թըրա՛շվը, հա՛մամլամի՛շ իլը:

Ան էլ գընաց, թըրաշ էլավ, հա՛մամլամիշ էլավ, իրը հանտե: Կընիկ էլավ, դալալ խուս կանչիլ՝ հայտե իրիք տարը ձի ոըհաթութին, խանգըստութին, թարխանութին: Ժողովուրդ ուրախացավ: Տորսեն յոթ օր, յոթ գիշիր ուրախութին կանին, խարսնիս կանին, անունք կը խասնին ուրինց մըրագին, դու էլ խասնիք ձի մըրագին: Էրկնուց իրիք խընծոր ընկավ, մեկ՝ պատմողին, մեկ՝ խասկըցըցողին, մեկ՝ ականջ առողին:

